

Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ

Ի պատասխան № SILD-AFG-14 «Արաքս, Արթիկ, Ապարան, Բաղրամյան, Թալին և Նաիրի համայնքների համար բազմաֆունկցիոնալ էքսկավատորների, Արաքս, Արթիկ, Վաղարշապատ համայնքների համար բազմաֆունկցիոնալ մինիամֆարձիչների, Արաքս համայնքի համար պտտվող պլատֆորմով անիվավոր էքսկավատորի, Ախուրյան համայնքի համար պտտվող պլատֆորմով թրթուրավոր էքսկավատորի և Մասիս համայնքի համար ավտոգրեյդերի գնում (բաղկացած 5 լոտից)» մրցույթի վերաբերյալ 16.08.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1`

Հարգելի Գործընկեր, Լոտ 3-ի տեխնիկական մասնագրերում նշված պահանջվող տեխնիկական մասնագրերի որոշ դրույթներ անհամադրելի են, մասնավորապես որպես անվավոր էքսկավատորի շահագործական զանգված (Առջևի բուլդոզերային կովշի կոմպլեկտավորմամբ) նշված է 17-18տ, սակայն 17-18տ շահագործական զանգվածով էքսկավատոր առաջարկելուց ունենում ենք շեղում կամ սրունգի երկարության /անհրաժեշտ է լինում ունենալ 250-270 սմ-ից ավել /օրինակ` 305սմ/ երկարությամբ սրունգ, կամ էլ ի հայտ է գալիս շեղում փորելու առավելագույն խորության դեպքում: Սրունգի երկարության կամ առավելագույն փորման խորության նշված պարամետրերն ապահովելով և էքսկավատորը կոմպլեկտավորելով առջևի բուլդոզերային հրիչով ունենում ենք 16,877 կգ շահագործական զանգված: Խնդրում եմ պարզաբանել, հետևյալ պարամետրերից` շահագործական զանգված, սրունգի երկարություն կամ առավելագույն փորման խորություն, որից շեղումն է առավել նպատակահարմար? Տեխնիկական կատալոգներում որպես ծահագործական զանգված նշվում է տեխնիկայի քաշը առանց համալրող/կոմպլեկտավորվող ագրեգատների, բացառությամբ կովշի/-այս առումով կարող ենք որպես շահագործական զանգված նշել էքսկավատորի քաշը ներառյալ կախովի սարքավորման փոխարինման փոխանցիչի /կամ որ նույնն է` աշխատանքային գործիքների արագ միացման սարքի/ քաշը?

կանխավ շնորհակալություն:

Պատասխան 1`

Շահագործման զանգվածը մոտավոր հասկացություն է, պետք չէ այն ընդունել կիլոգրամների ճշտությամբ: 16,877 կգ և 17-18 տոննայի միջև շեղումը չնչին է: Այնուամենայնիվ, եթե քաշի և փորելու խորության միջև հակասություն լինի` փորելու խորությունը ավելի կարևոր է: Խնդրում ենք հայտ ներկայացնելիս առաջնորդվել մրցութային փաթեթի պահանջներով:

Հարց N 2`

Հարգելի Գործընկեր, Լոտ 2-ի "Հորատիչ" համալրող ագրեգատի տեխնիկական մասնագրերում, որպես հորատիչի երկարություն նշված է 265-275 մմ, իսկ փորելու առավելագույն խորության չափը՝ 1550-1600 մմ: Խնդրում եմ իրականացնել ճշտգրկում:

Պատասխան 2`

Խնդրում ենք ուշադրության կենտրոնում պահել փորելու առավելագույն խորության պարամետրը և հայտ ներկայացնելիս առաջնորդվել մրցութային փաթեթի պահանջներով:

Հարց N 3`

Հարգելի Գործընկեր, մեր կողմից նկատվում է նաև անհամադրելիություն Լոտ 2-ի համալրող ագրեգատի՝ Հիդրավլիկ մուրճ հիդրոմուրճի հենակով պահանջվող տեխնիկական մասնագրերում, մասնավորապես՝ Հիդրավլիկ մուրճի հարվածի էներգիան պահանջվում է 630-650Ջոուլ սահմաններում, իսկ Հիդրավլիկ մուրճի հարվածների հաճախականությունը՝ 1400-1500 հարված/րոպե սահմաններում: Ցանկանում ենք նշել, որ մինիամբարձիչը հիդրոմուրջով ագրեգատավորելու/կոմպլեկտավորելու դեպքում, երբ ընդրում ենք հարվածի էներգիայի 630-650Ջոուլ սահմաններում հիդրոմուրճ, ապա տվյալ դեպքում հարվածների հաճախականությունը լինում է փոքր 1400 հարված/րոպե-ից, իսկ եթե ընտրում ենք այնպիսի մոդել, որն ապահովում է 1400-1500 հարված/րոպե հաճախականություն, ապա հարվածի էներգիան լինում է առավելագույնը 530Ջ: Խնդրում եմ վերանայել SU կամ նշել այն ցուցանիշը, որից հնարավոր է իրականացնել շեղում:

Ընդհանրապես ցանկալի կլինի յուրաքանչյուր լոտի համար առնվազն մեկ ցուցանիշի/SU-ի շեղում թույլատրելու հնարավորություն տրվի հայտատուներին:

Շնորհակալություն:

Պատասխան 3`

Հարգելի մատակարար, խնդրում ենք հայտ ներկայացնելիս առաջնորդվել մրցութային փաթեթի պահանջներով:

Հարգանքով,

Ռոզա Դանիելյան

N° SILD-AFG-14 մրցույթի քարտուղար

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

21.08.2023թ.